ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 316-Ա «27» 09 2021 թ. ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի N 60-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի մարտի 22-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատանքային ներքին կարգապահական կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2014 թվականի փետրվարի 27-ի N 16-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 60-Ա հրամանի (այսուհետ՝ հրաման) 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) հավելվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ 7-րդ բաժնով.

«7. **ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

55. Կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման գործընթացի պատասխանատուներ են համարվում Նախագահի հրամանով նշանակված կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատուն (այսուհետ՝ միջոցառման պատասխանատու) և Անձնակազմի կառավարման բաժինը:

56. Կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները պետք է աջակցեն սույն ներքին կանոնների 55-րդ

կետով նախատեսված պատասխանատուների կողմից կատարվող աշխատանքների պատշաճ իրականացմանը:

57. Միջոցառման պատասխանատուն՝

1) ապահովում է ախտահանման գործընթացի, ինչպես նաև անձնակազմի ջերմաչափման արդյունքների գրանցամատյանների վարումը,

2) ապահովում է աշխատողների կողմից սահմանված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանումը,

3) ապահովում է սույն ներքին կանոնների 59-րդ կետի պահանջները,

4) վարում է սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանները, ինչպես նաև իրականացնում է գործընթացի շարունակական դիտարկումներ,

5) աշխատողների շրջանում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեպքեր արձանագրվելու դեպքում իրականացնում է նրանց հետ սերտ շփում ունեցած անձանց (կոնտակտավորների) շրջանակի ճշտման աշխատանքները և նրանց տվյալների ներկայացումը՝ ինքնամեկուսացումը կազմակերպելու նպատակով:

58. Անձնակազմի կառավարման բաժինն ապահովում է՝

1) սույն ներքին կանոնների 62-րդ, 63-րդ և 64-րդ կետերով պահանջվող փաստաթղթերի հաշվառումը և համապատասխան միջոցների ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում զեկուցում է գլխավոր քարտուղարին և տեղեկացնում տվյալ ստորաբաժանման ղեկավարին,

2) աշխատողների կողմից սահմանված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանումը,

3) աջակցում է միջոցառման պատասխանատուին 57-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված աշխատանքների կատարման գոործընթացում:

59. Կոմիտեում անհրաժեշտ է ապահովել.

1) դիմակների, ձեռնոցների, ձեռքերի և մակերեսների մշակման համար նախատեսված ախտահանիչ միջոցների առկայությունը.

2) ձեռքերի լվացման հնարավորություն, հոսող ջրով, օճառով.

3) Կոմիտեի ընդհանուր մուտքի մոտ, միջանցքներում թափոնների հեռացման համար փակվող «Օգտագործված դիմակներ, ձեռնոցներ» մակնշմամբ փակվող կափարիչով աղբամաններ.

4) Կոմիտեի ընդհանուր մուտքի մոտ, միջանցքներում տեղադրվում են տարաներ՝ ձեռքերի ախտահանման համար մինչև 70%-ոց սպիրտային հիմքով ախտահանիչ միջոցով՝ յուրաքանչյուր մտնող անձի ձեռքերը պարտադիր ախտահանման համար.

5) հեռահար ջերմաչափ:

60. Աշխատանքային օրվա ընթացքում առնվազն 2 անգամ՝ աշխատանքի ներկայանալիս և աշխատանքային օրվա ընթացքում՝ ընդմիջումից հետո, չափվում է բոլոր աշխատողների ջերմությունը՝ հեռահար 37 և բարձր ջերմություն արձանագրվելու դեպքում արդյունքները գրանցվում են միջոցառման պատասխանատուի կողմից վարվող համապատասխան գրանցամատյանում և տվյալները հաղորդվում են գլխավոր քարտուղարին:

61. Համաձայն սույն ներքին կանոնների Կոմիտեում աշխատողների դիմակների կրումը պարտադիր է:

62. Համաձայն գործող օրենսդրության Կոմիտեի աշխատողները յուրաքանչյուր 14 օրը մեկ Անձնակազմի կառավարման բաժին պարտավոր են ներկայացնել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության (այսուհետ՝ ՊՇՌ հետազոտություն) բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 10-ի թիվ 2688-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատը (այսուհետ՝ սերտիֆիկատ), բացառությամբ՝ Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների: ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին: Ընդ որում, սերտիֆիկատը գրանցվում է Անձնակազմի կառավարման բաժնի կողմից վարվող գրանցամատյանում և պատճենը պահպանվում է:

63. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված աշխատողը պարտավոր է Անձնակազմի կառավարման բաժին ներկայացնել պատվաստման սերտիֆիկատը, որը գրանցվում է իր կողմից վարվող գրանցամատյանում և պատճենը կցվում է աշխատողի անձնական գործին: Առաջին և երկրորդ դեղաչափերի միջև կոնկրետ պատվաստանյութի համար սահմանված ժամանակամիջոցում ամբողջական պատվաստում չունեցող աշխատողը չի ներկայացնում ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ: Կոնկրետ

պատվաստանյութի համար դեղաչափերի միջև սահմանված ինտերվալից ավել ժամանակամիջոցի դեպքում երկրորդ դեղաչափը չստացած և բժշկական հակացուցում չունեցող աշխատողը ներկայացնում է ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատը:

64. Բժշկական հակացուցումներ ունեցող աշխատողները Անձնակազմի կառավարման բաժին ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պատվաստման բժշկական հակացուցումների մասին բժշկական փաստաթուղթը:

65. Սույն ներքին կանոնների 62-րդ, 63-րդ և 64-րդ կետերով նախատեսված փաստաթղթերն աշխատողի կողմից չներկայացնելու դեպքում, համարվում է աշխատողի պարտականության խախտում և մինչև նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը համարվում է որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:

66. Սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում՝ սույն ներքին կանոնների 55-րդ և 56-րդ կետերով նախատեսված անձինք առերևույթ խախտում թույլ տված աշխատողի վերաբերյալ տվյալները մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են տվյալ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված աշխատողի անմիջական ղեկավարին (վերադասին), որն էլ պարտավոր է խախտման մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:

67. Սույն ներքին կանոնների 62-րդ, 63-րդ և 64-րդ կետերի պահանջների, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները խախտելու դեպքում՝ ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին աշխատողը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է գրավոր բացատրություն (զեկուցագիր):»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Восстановимая подпись

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN GARIK 2811870695

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ